# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

N//1411-2025
«16» հունվարի 2025 թ.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՏԻԿԻՆ ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՏԻԿԻՆ ԱՐՓԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ
ՏԻԿԻՆ ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆԻՆ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ՍՈՒՐԵՆ ՊԱՊԻԿՅԱՆԻՆ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆԻՆ

ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆԻՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՊԱՐՈՆ ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԷԴՈՒԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍՏԵՓԱՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
ՊԱՐՈՆ ԽԱՉԱՏՈՒՐ ԽԱՉԻԿՅԱՆԻՆ

**Հարգելի՛ գործընկերներ,**

Հայտնում եմ, որ ՀՀ վարչապետի հանձնարարականի հիման վրա իրականացվող ազդարարման համապետական արշավի շրջանակում՝ Արդարադատության նախարարության նախաձեռնությամբ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Հայաստան Բարեվարքություն» ծրագրի շրջանակներում հայտարարված մրցույթի ընթացքում հաղթած «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից և Արդարադատության նախարարության մասնակցությամբ իրականացվում է «Ազդարարի՛ր, Հայաստան» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր):

Ծրագրի նպատակն է իրականացնել ազդարարման համակարգի հանրային իրազեկում, համակարգի վերաբերյալ հասարակության տարբեր խմբերի ընկալումների փոփոխմանն ուղղված միջոցառումներ, ազդարարման միասնական հարթակից օգտվելու թվային գիտելիքների բարձրացում:

Տեղեկացնում եմ, որ Ծրագրի շրջանակում արդեն իսկ Երևանում և ՀՀ 4 մարզում իրականացվել են ազդարարման համակարգի վերաբերյալ վերապատրաստումների ավելի քան 600 ուսանողների, աշակերտների, ուսուցիչների, մասնավոր հատվածի և ՏԻՄ ներկայացուցիչների համար:

Ի լրումն վերոնշյալի, Ծրագրի շրջանակում մշակվել են նաև հետևյալ տեղեկատվական ձեռնարկները.

1. Տեղական ինքնակառավարման մարմիններում ներքին ազդարարման մեթոդական ուղեցույց,

2. Մասնավոր հատվածում ներքին ազդարարման մեթոդական ուղեցույց,

3. «Ձեր թվային ազդարարման իրավունքը» տեղեկատվական-ուսումնական ձեռնարկ:

Վերոգրյալի համատեքստում՝ խնդրում եմ Ձեր աջակցությունը կից ներկայացվող կրթական-տեղեկատվական ձեռնարկները Ձեր ղեկավարած գերատեսչության, ինչպես նաև այդ գերատեսչության համակարգման ներքո գտնվող բոլոր տեղական ինքնակառավարման մարմինների, ենթակա կառույցների, գործակալությունների, գրասենյակների, իրավաբանական անձանց և այլ կառույցների պաշտոնական կայքէջերում հրապարակելու, ինչպես նաև նշյալ մարմինների աշխատակիցների շրջանում իրազեկելու ուղղությամբ:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

**ՍՐԲՈՒՀԻ ԳԱԼՅԱՆ**

Լիանա Թովմասյան
+37410 59 40 17